#ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ

ՏԵՂԵԿԱԳԻՐ 6, ՀՈՒԼԻՍ 2021



ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ

ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄՆ ԻՆՖՈԳՐԱՖԻԿԱՆԵՐՈՎ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՎԻԴԵՈԲԼՈԳ

ՆԱԽՈՐԴ ՏԵՂԵԿԱԳՐԵՐԸ ՏԵՍ ԱՅՍՏԵՂ

Փաստերի ստուգման լաբորատորիաներ

«Պայքար ապատեղեկատվության վիրուսի դեմ» ծրագրի շրջանակներում 2020 թվականի հուլիսից Ինֆորմացիայի ազատության կենտրոնը Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ ՀԿ-ի հետ գործարկեց փաստերի ստուգման լաբորատորիաները Հայաստանի հետևյալ 5 կրթական հաստատությունում՝ նպատակ ունենալով զարգացնել երիտասարդների հմտությունները և մեդիագրագիտությունը.

1. Երևանի Պետական համալսարանի Ժուռնալիստիկայի ֆակուլտետ
2. Բրյուսովի անվան Լեզվագիտական համալսարանի Լրագրության բաժին
3. Գավառի պետական համալսարան
4. Մխիթար Սեբաստացի կրթահամալիր
5. Արեգնազան կրթահամալիր:

Տեղեկագիրը պատրաստվել և հրապարակվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի համատեղ իրականացվող «Պայքար ապատեղեկատվության վիրուսի դեմ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակներիի դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ծրագրի մեկնարկին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հուշագրեր ստորագրեց 5 կրթական հաստատության ղեկավարների հետ՝ յուրաքանչյուր կրթական հաստատությունից ներգրավելով դասախոս-ուսուցչի՝ որպես դասընթացավար:

Փոխըմբռնման հուշագրեր ստորագրելուց հետո Ծրագրի փորձագետները մշակեցին Փաստերի ստուգման ուսումնական ծրագիր, որը ներառում է տեքստերի, մուլտիմեդիա տեղեկատվության, քարտեզների, վեբ կայքերի վերլուծության համար անհրաժեշտ բոլոր գործիքներն ու պրակտիկան: Փաստերի ստուգման ուսումնական ծրագիրը ներառում է նաև բազմաթիվ տեղեկություններ և խորհուրդներ այն մասին, թե ինչպես սովորեցնել տվյալների ստուգման և ստուգման գործիքներն ու հմտությունները:

Ծրագրի մեկնարկին կրթական հաստատությունների դասընթացավարները մեր փորձագետներ Սամվել Մարտիրոսյանի և Արթուր Պապյանի օգնությամբ անցան վերապատրաստման 5-օրյա դասընթացը:

Արդեն սեպտեմբերի սկզբին կրթական հաստատություններում ձևավորվեցին արտադասարանային խմբերը, որտեղ ներգրավվեցին ուսանող/աշկերտները: Նրանց ներգրավվածության միակ պայմանը լաբորատորիաների աշխատանքներին մասնակցելու ցանկությունն էր:

Դասընթացավարները ներածական հանդիպումներ են կազմակերպել տարբեր կուրսերի և ավագ դպրոցի աշակերտների հետ՝ ներկայացանելով լաբորատորիաների գործունեության հիմնական ուղղությունները:

Արդյունքում 5 կրթական լաբորատորիաներում մոտ մեկ տարի դասընթացավարների հետ աշխատեց շուրջ 50 երիտասարդ:

Երևանի պետական համալսարան

- Դասընթացավար՝ Սահականուշ Պետրոսյան
- Սկիզբը՝ 15 սեպտեմբերի 2020 թ
- Ուսանողների թիվը՝ 12
- Դասերն անցկացվել են ինչպես առկա, այնպես էլ հեռավար:
- Աշխատանքային գրաֆիկ՝ շաբաթական երկու անգամ 1,5 ժամ տևողությամբ: Ամեն երեքշաբթի, հինգշաբթի, ժամը 14:30:

Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարան

- Դասընթացավար՝ Գեղամ Վարդանյան
- Սկիզբը՝ 20 նոյեմբերի 2020 թ.
- Ուսանողների թիվը՝ 9
- Միայն առցանց
- Աշխատանքային գրաֆիկ՝ շաբաթական մեկ անգամ, ամեն կիրակի, ժամը 10:00-ից 11-ը:

Գավառի պետական համալսարան

- Դասընթացավար՝ Պապին Մուրադյան
- Սկիզբը՝ 30 սեպտեմբերի 2020թ.
- Ուսանողների թիվը՝ 10
- Միայն առցանց
- Աշխատանքային գրաֆիկ՝ շաբաթական մեկ անգամ, ամեն կիրակի ժամը 9:00-10:10:

Մխիթար Սեբաստացի կրթահամալիր

- Դասընթացավար՝ Հասմիկ Թոփչյան
- Սկիզբը՝ 01 հոկտեմբերի 2020թ.
- Աշակերտների թիվը՝ 7
- Դասերն անցկացվել են ինչպես առկա, այնպես էլ հեռավար:
- Աշխատանքային գրաֆիկ՝ շաբաթը մեկ անգամ մեկ ժամ:

Արեգնազան կրթահամալիր

- Դասընթացավար՝ Սիրանույշ Կասպարովա
- Սկիզբը՝ 23 սեպտեմբերի 2020թ.
- Աշակերտների թիվը՝ 9
- Միայն առցանց
- Աշխատանքային գրաֆիկ՝ ամեն երեքշաբթի 17:30 - 20:00

«ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳԻՐ

Թեմա 1. Ինչ է մեդիագրագիտությունը և ինչու է այն կարևոր

Այս թեմայի շրջանակում դասավանդողը ներկայացնում է, թե ինչ է մեդիագրագիտությունը առհասարակ, ինչու է այն կարևոր հատկապես հիմա՝ ինֆոդեմիայի ժամանակաշրջանում, խոսելու է այն մասին, թե ինչ է լուրը, ինչ է մեդիան, ինչպիսին պետք է լինի մեդիայի դերը հասարակությունում:
Առաջարկվում է դասը վարել հիմնականում քննարկման, հարցուպատասխանի տեսքով:
Քննարկման թեմաներ՝ ի՞նչ եք դիտում, կարդում, ինչու է դա ձեզ համար հետաքրքիր կամ կարևոր, օրվա ընթացքում ի՞նչ նոր բան եք իմացել, որտեղից, ո՞ր դեպքերում էր այդ տեղեկատվությունը օգտակար, ո՞ր դեպքերում էր ավելորդ: Որքանով եք ձեզ զգում որպես տեղեկատվության տարածող, այլ ոչ միայն ընկալող:

Թեմա 2. Լրատվամիջոցներ՝ տիպերը, կառուցվածքը

Դասավանդողը հակիրճ ներկայացնում է մեդիայի պատմությունը՝ ժայռապատկերներից մինչև բանավոր պատմություններ, թերթեր, էլեկտրոնային հաղորդակցության միջոցներ: Այնուհետև առավել մանրամասն կենտրոնանում է հայաստանյան լրատվամիջոցների վրա, ներկայացնում առավել ազդեցիկ, մեծ լսարան ունեցող լրատվամիջոցները, խոսում է հանրային լրատվամիջոցների առանձնահատուկ դերի մասին, ներկայացնում է միջազգային լրատվամիջոցները, այդ թվում պետական՝ քարոզչական նշանակություն ունեցողները:

Օգտակար նյութեր դասընթացավարների համար

- Մեդիագրագիտություն՝ ձեռնարկ - https://media.am/hy/lab/2020/04/16/17917/
- Փաստերի ստուգումը և լրագրողների տեղեկություն ստանալու իրավունքը ՁԵՌՆԱՐԿ - http://factradar.tilda.ws/
- Տեղեկությունների ստուգում. բուհական դասընթացի մեթոդական ուղեցույց - https://media.am/hy/lab/2019/02/09/11015/
- «Լրագրության հինգ կարևոր հարցերը», հանրային լրագրության ակումբ - http://media.am/pjc-5-W

«Փաստերի ստուգում» դասընթացի նպատակն է աջակցել կրթական հաստատություններին ուսուցանել ապատեղեկատվության դեմ պայքարի առկա գործիքներն ու մեխանիզմները, աշակերտներին և ուսանողներին փոխանցել տեղեկությունների ստուգման գործնական գիտելիք և հմտություններ: Ստացած գիտելիքը աշակերտներն ու ուսանողները կկիրառեն ուսումնական հաստատություններում ստեղծվող «Փաստերի ստուգման կրթական լաբորատորիաներում»:

Դասընթացի հիմնական խնդիրներից է դասավանդող մասնագետների համար ուղենշել այն հիմնական թեմաները, որոնք անհրաժեշտ են փաստերի ստուգման սկզբունքների, այդ նպատակով կիրառվող լրագրողական հմտությունների, թվային հիմնական գործիքների մասին դասավանդելու համար:

Դասընթացը նախատեսված է այն մասնագետների համար, ովքեր պետք է դասավանդեն ծրագրի շրջանակում ձևավորվող «Փաստերի ստուգման կրթական լաբորատորիաներում»: Դավասանդող մասնագետները ազատ են ընտրելու Դասընթացում ներկայացված թեմաներից առավել նպատակահարմարները, ինչպես նաև ավելացնել պակասող բաժինները:

Դասընթացը բաղկացած է 14 հիմնական բաժնից, որոնցից յուրաքանչյուրն անդրադառնում է փաստերի ստուգման առանձին հիմնահարցերի ու դրանց լուծման միջոցներին ու գործիքներին:

Դասընթացն ավարտած ուսանողները/աշակերտները կունենան հիմնարար գիտելիք և հմտություններ լրագրության հիմունքների, լրագրողական աղբյուրների, տեղեկություններ փնտրելու, տարածելու մեխանիզմներին, փաստերի ստուգման անալոգային և թվային մեթոդների, գործիքների մասին և կկարողանան դրանք ինքնուրույն կիրառել փաստերի ստուգման և ճշգրտված տեղեկությունների տարածման նպատակով:

«Փաստերի ստուգում» դասընթացի ծրագիր >>>

ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄՆ ԻՆՖՈԳՐԱՖԻԿԱՆԵՐՈՎ

ԻՆՉՊԵՍ ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ԿԵՂԾ ԼՈՒՐԵՐԸ

«Տեղեկու թյունների փոխանցումը կամ տարածումը որոշակի շրջանակներում՝ մարդկային զարգացման ամենակարեւոր խթաններից ու նախապայմաններից է: Քանզի որքան այսօր է տեղեկությունն ամենաթանկարժեք կապիտալը, այնպես էլ եղել է դարեր ու հազարամյակներ առաջ: Ամեն ինչ սկսվել է պատի թերթերից: Անհիշելի ժամանակներից պահպանված բոլոր ժայռապատկերները որոշակի տեղեկություններ են պարունակում, «պատի թերթեր» են՝ նախատեսված դրանց անհրաժեշտությունը զգացող հանրույթի համար»:

ԻՆՉ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՎՍՏԱՀԵԼ

«Տեղեկատվական գրագիտությունն ու մեդիագրագիտությունն օգնում են մարդուն ավելի գիտակից որոշումներ կայացնել որպես մեդիասպառողներ, մեկնաբանել մեդիայի աշխատանքը,ինչպես նաեւ ստեղծել մեդիա բովանդակություն `ի շահ իրենց իսկ իրավունքների պաշտպանության»:

ՏԱ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

20 Տարի Միասին Տեղեկատվության Ազատության Համար
2001 - 2021
ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

foi@foi.am
+374 91 407836
+374 91 700 974

#ԱՆՎՃԱՐ_ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ
տեղեկատվության ազատության ոլորտում

ԴԻՄԵՔ ՄԵԶ, եթե

- չգիտեք՝ ինչպես դիմել տեղեկություն ստանալու համար
- ստացել եք թերի կամ ոչ լիարժեք պատասխան
- խախտվել են տեղեկություն ստանալու ժամկետները
- պետական մարմինները մերժել են տրամադրել պահանջվող տեղեկությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հայաստանի Հանրապետություն,
Երեւան, 0010, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ.՝ (+374 10) 560 360
Էլ. փոստ՝ foi@foi.am
www.foi.am

#ՎԻԴԵՈԲԼՈԳ

#ՖԵՅՔԱՔԱՂ 6
Սամվել Մարտիրոսյանի և Արթուր Պապյանի հետ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը և Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ ՀԿ-ն «Պայքար ապատեղեկատվության վիրուսի դեմ» ծրագրի շրջանակում մեկնարկել են Ֆեյքաքաղ վիդեոբլոգների շարքը՝ մեդիափորձագետներ Սամվել Մարտիրոսյանի և Արթուր Պապյանի մասնակցությամբ: Նախաձեռնության նպատակն է զարգացնել լրատվամիջոցների մեդիագրագիտությունը և երիտասարդության փաստերի ստուգման հմտությունները:

Ֆեյքաքաղ #6. բացահայտում ենք ֆեյք տեսանյութերը

Հաճելի դիտում:
Կհանդիպենք հաջորդ ամիս

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հայաստանի Հանրապետություն,
Երեւան, 0010, Փ. Բուզանդի 1/3,
4-րդ հարկ
Հեռ.՝ (+374 10) 560 360
Էլ. փոստ՝ foi@foi.am
www.foi.am

Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ
Հայաստանի Հանրապետություն,
Երևան 0002, Ղազար Փարպեցու 9բ,
27 ա
Հեռ.՝ +374 95 938363
Էլ. փոստ՝ info@mdi.am
www.mdi.am